Բրոքերային հաշիվների բացման և արժեթղթերով առքուվաճառքի գործարքների իրականացման խրախուսման արշավի պայմաններ

"Էփրիքոթ Կապիտալ" ՓԲԸ
+374 (60) 70-71-11, +374 (93) 17-01-72, info@apricotcapital.am

Արշավի նպատակները

Արշավի իրականացման ժամանակահատվածում

- Խթանել "Էփրիքոթ Կապիտալ" ՓԲԸ-ում բրոքերային հաշիվների բացումը
- Խթանել նոր հաճախորդների կողմից արժեթղթերով առքուվաճառքի գործարքների իրականացումը

Արշավին մասնակցող հաճախորդներ

Արշավին կարող են մասնակցել 2026 թվականի փետրվարի 03-ից մայիսի 01-ն ընկած ժամանակահատվածում "Էփրիքոթ Կապիտալ" ՓԲԸ-ում նոր հաճախորդ հանդիսացող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, որոնք այդ ժամանակահատվածում ԱՄՆ շուկայից նոր հավելվածով իրականացված առուվաճառքի գործարքների համար կազատվեն միջնորդավճարներից: Այս հաճախորդների մասնակցությունն ավտոմատ է, և նրանք մասնակցության համար քայլեր անելու կարիք չունեն:

Արշավի պայմանները

Արշավին մասնակցող հաճախորդների համար 2026 թվականի փետրվարի 03-ից մինչև 2026 թվականի մայիսի 01-ը ներառյալ ԱՄՆ շուկայից "Էփրիքոթ Կապիտալ" ՓԲԸ-ի հավելվածի միջոցով տեղադրված առուվաճառքի հայտերը կկատարվեն առանց միջնորդավճարի, իսկ եթե 2026 թվականի փետրվարի 03-ից մայիսի 01-ն ընկած ժամանակահատվածում արտոնությունից օգտվող հաճախորդի կողմից գնված և վաճառված արժեթղթերի հանրագումարային քանակը գերազանցի տասը հազար հատը, ապա գերազանցող մասի նկատմամբ կկիրառվի սակագին՝ 0,015$-ին համարժեք ՀՀ դրամ ամեն արժեթղթի համար, որը կհաշվարկվի և կգանձվի տվյալ ամսվա ավարտին: